ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 1194-Ա « 09 » հոկտեմբերի 2025թ.

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/194» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության կողմից ներկայացված Երևան քաղաքի Աճառյան փողոցում և Մյասնիկյան պողոտայում արտաքին լուսավորության հենասյուների և գործող, ինչպես նաև նախագծման, կառուցման փուլում գտնվող կոմունիկացիային միանալու համար ստորգետնյա խողովակների տեղադրման աշխատանքների գնման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-25/194» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Հ. Էվոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Հ. Զոհրաբյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության հասարակական տրանսպորտի կարգավորման բաժնի առաջատար մասնագետ
Ա. Ոսկանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության երթևեկության կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
Ե. Ռամազյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության երթևեկության կառավարման բաժնի առաջատար մասնագետ
Վ. Խաչատրյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության երթևեկության կառավարման բաժնի առաջատար մասնագետ

2. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների գնումների բաժնի առաջատար մասնագետ Ս. Սիմոնյանին:

3. Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային

օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի հ.1, հ.120 սենյակ):

4.Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ